



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

5507. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 2

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայեւեմով, քէ Ֆրանսերէնով

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Խորհրդագրական Ձեռնարկ Տրաքեաններու վրայ

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Բարեբաւ Կեդիմներ, Վ. Զանգաւոր

Իրականութիւնները Գրականութեան

Եւ Արուեստի մէջ

ՅՈՎԶ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Արվարդաբանութիւն

Յ. ԱԼՓԻԱՐ

Վիպակ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

Բաց Նամակ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Կեդիւ Եւ Հիւկո

ՖԵՐՆԱՆ ՊԱՆԸՆԵՐԷՐ-ԿԷՌԻ

ԼԵՒՈՆ ԷՍԱԶԱՆԵԱՆ

Արեւմտեան Նուագանդէտը

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻԶԱՆ

1907

UNION

OF THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

THE

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

յԵՐՍ. , ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ,
ԹԻԻ 12

Առէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար և երկար տարի ներքէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջգային տկարութիւնները, հին և նոր դաղիական ակտերը : Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտնէրով կը բուժէ կարճ միջոցի մէջ : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը : Չորեքշաբթի օրերը միայն ձրի :



Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ռենկալ, օրովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տագնապի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅՐԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին :

մեքենան լուսագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիրաւ գործածելին ըլլալուն՝ բովանդատաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՆԱԼԱԹԱՍ
ԲԵՐՍ.
ՊՈԼԵՍ
ՍԻՆԿԵՐ

- | | |
|----------|---|
| ՆԱԼԱԹԱՍ. | { 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի գէմ, 343 և 343. |
| | { 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին գէմ : |
| ԲԵՐՍ. | { 1. Սինկէր խան, Թիւնէլին հտեւը . |
| | { 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին գէմ . |
| ՊՈԼԵՍ | { 1. Սուլթան Համամ. |
| | { 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայանին գէմ. 13. |
| ՍԻՆԿԵՐ | { 2 Զորչը Պօյու, Թ. 120 . |

Դասերը եւ նորոգութիւնները ձրի :

Կատարեալ երաշխաւորութիւն :

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Բնկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը

Տխար Սեղրաք Արամսանի տաջարկած հանելուկին ստացանք
պատասխան մը Տխար Յակոր Արայճեանէ , ստեյն պայմանաւմը ան-
ցած ըլլալով՝ անընդունելի կը մնայ : Կը մեկնէ հետեւեալ կերպով . —
Անձրեւ կը նշանակէ ինը հասիկ (թուրք. soqurq չընկըլ) որոնք են-
ձին , կարկուտ , եղեամբ, ցօղ, չողի, տափ , սառ , քրտինք , արցունք :

“ՄԱՆՁՈՒՄԷ”Ի ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Մանգուսի Տնօրէնութիւնը , գիւրութիւն մը հայթայթած ըլլալու
համար , մասնաւոր Գրասենեակ մը հաստատած է Պոլիս , Սիրքէճի ,
Գիւչիք Իսթայիլ փաշա խան թիւ 12 , ուր կրնան զիմել ծանուցումի
տէրերը և բանակցիլ իրենց ծանուցումներուն համար : Գրասենեակը
կալուածատէրներու մասնաւոր աշաղկրութիւնը կը հրաւիրէ բոլորովին
նոր և իր տեսակին մէջ միակ ձեւնարկի մը վրայ , որ կը կայանայ
ամէն կարգի կալուածներու գնումի , վարձումի և վաճառումի ծանու-
ցումներ — ընդհանուր ծանուցումներէն բացառաբար աննշան գու-
մարի մը փոխարէն — հրատարակելու մէջ : Բոլոր գիտողները պիտի
հաստատեն այս տեսակ ծանուցումներու համար եղած՝ պահանջումին
համեմատութիւնը :

ՕՍՄԱՆՍԱՆ ԿԱՏԱԿԵՐԳԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ

Քաջալերուած այն համակիր ընդունելութենէն՝ զոր թատերասէր հա-
տարակութիւնը ցոյց կուտայ իրեն հանդէպ , կը կրկնէ իր ջանքերը ,
նոր թատերախաղեր բեմ հանելով , և բազմացնելով իր ներկայացում-
ներուն շարքը : Հինգշաբթի գիշեր Շահգատէ Պաշի թատրոնը ներկա-
յացուց հռչակաւոր Կապէշի «Պարոն Տուպլումար» անուն թատերախաղը ,
յաջորդեալ զաւելչաւ մը : Ուրբաթ գիշեր՝ Կառիէթէի մէջ զեղեցիկ
երեկոյթ մը , իսկ վաղը Կիրակի՝ ունի ցերեկոյթ մը , խիստ խոստմնա-
լից յայտադիրով մը : Թատերասումը , զոր կը կազմեն , ինչպէս յայտ-
նի է , Անմէա Ֆէհիմ , Շահինեան , Պինէմէճեան , Թօլայեան Էֆ.ները և
Տիկ . Տիկ , Հէքիմեան , Պինէմէճեան , Գահարիկ՝ ջանք չխնայելու
ձգելով համար թատերասէր հասարակութիւնը : Գիշերը միշտ չափաւոր



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԳ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 2

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ՀԱՅԵՐԷՆՈՎ, ԹԷ ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ

Մարկոս Աղաբէգեան, — մէկը իրենց խելքին հաւած հինօրէնք հրապարակադիրներու ախպարներէն, — անհարկի ու միտմիտ փութկոտութիւնը ունեցեր է ցնդած գաղափար մը մէջտեղ հետելու, «Բիւզանդիոն»ի մէջ, մզլստ ու յետամնաց իմացականութեան մը իր բոլոր պահածոյ մթերքը պարզելով և եղական սխրագործութիւն մը ըրած ըլլալու պարզամիտ խելքով: Ու Մարկոս Աղաբէգեան՝ իրմէ տարբեր խորհող մը գանձելուն սրամտած, — զգացում՝ որմէ կը յուզուին այս կարգի ախպարները, — և իր ամենագէտ՝ սոնքութեանը մէջ զրգռուած, փրփրեր է սաստիկ տենդով մը ու միտքին բոլոր անկապ ուժովը լեզուին է տուեր, ըսելու համար միայն թէ՛ կեդրոնականի մէջ պէտք չէ՛ ֆրանսերէնով աւանդուին կարգ մը ճիւղեր, ինչպէս յօդուածով մը հակառակը կը պահանջէինք մենք: Իր յուզումը և զրգռութիւնը չուտով արժանացեր է սակայն սառնորակ դասին «Բիւզանդիոն»ի Խմբագրապետին, որ նոյն թիւին իսկ մէջ Մարկոս Աղաբէգեանի զուխը կը պսակէ արժանի լուացողականով մը, հիմնովին ջատագով հանդիսանալով մեր տեսութեան:

Թէ ի՞նչ է խնդիրը. — Ըսած էինք և կը կրկնենք թէ՛ նկատելով որ

Փրանսերէնի ուսումը մեր երկրորդական վարժարաններուն մէջ հիմնապէս զարգացնել ժամանակին մեծ պահանջքներէն մէկն է դարձած, նկատելով որ հայերէն լատիներէն դասագիրքերու չգոյութեան պատճառով Կեդրոնականի ուսանողները հարկադրուած են չափ մը ուսումնեւորու մէջ իրը դասագիրք տեսրակներով գիր գրելու, նկատելով որ ասիկա պարզ ժամավաճառութիւն է և անհանդերձելի, անողտ, պժգալի տանջանք մը՝ որ ուսանողը յուսահատեցնելէ ուրիշ բանի չծառայեր, նկատելով որ Կեդրոնականի դասարաններէն մեծ մասը կարող են Փրանսերէն լեզուով ու Փրանսերէն դասագիրքով ուսանիլ այն ուսումնեւորը և գիտութիւնները՝ որոնց հայերէնով աւանդուելէն ո՛ր և է օգուտ չծագիր, — ընդհակառակը, — նկատելով որ լոկ հայերէն սորվելու համար չէ որ ուսանող մը կը յաճախէ Կեդրոնական և թէ ան առե՛կ ուսումնեւորն ալ հայերէն տեսնելով չէ՛ որ կոտարեկապէս կը արանայ լեզուին, նկատելով որ լոկ հայերէնի կրկնակ [զրարար և աշխարհարար] դասաւանդութիւններով ալ կարելի է չափ լաւ հմտացնել ուսանողները մայրենի լեզուին, պէ՛տք է, անհրաժեշտ է, ասիպողակա՛ն է որ՝ կարգ մը ուսումնեւոր ու գիտութիւնեւոր աւանդուելն Փրանսերէն լեզուով, որպէս զի՝ թէ՛ ուսանողները աշտարի լեզուալուսակ գիր գրելու անպէտ ժամավաճառութիւնէն եւ թէ՛ աւելի՛ արմատապէս կարող ըլլան հմտանալ Փրանսերէնին :

Մարկոս Աղաբէգեան միակ առարկութիւն մը ունի այս բոլորին դէմ : Իր խելքով, այդ պարագային, ուսանողները կը գրկուին եղեր մայրենի լեզուն յաջողապէս ուսանելէ : Այս միամիտ հաւատքին վրայ ծիծալիլ միայն կրնանք : Նախորդ յօդուածով մեր ըսածները այնչափ բացորոշ, եւ, կը կարծենք, համոզիչ ալ են, որ՝ պէտք չենք տեսներ մեր տեսութիւնը պաշտպանելու փորձի մը : Միւս կողմէ, Մարկոս Աղաբէգեանի խելքին ծառայող անդրդուելի ու ինքնահաւան սովորամոլ միայք մը՝ դարձի բերելու հաւատքն ալ չունինք՝ որպէս զի ջանանք համոզել՝ նոր պաշտպանողականներով ու պատճառաբանութիւններով : Իր հանրային չահեկանութեանը համար, կրկին անգամ խնդիրին ա՛յսչափ անդրադառնալով կը բաւականանանք : Այսօր ամէն լրջախոհ անձի կողմէ ջատագովուած տեսութիւն մըն է մեր պարզած կարծիքը ու յայտնած բաղձանքը, որ բաղձանքն է Կեդրոնականով շահագրգռուող բոլոր լայնախոհ միաքերու : Բայց Կեդրոնականը չափի ուղէ տաջարկուած բարեփոխութիւնը մտցնել իր կրթական ծրագիրին մէջ, ատիկա կանուխէն գիտնիք : Շատ բացորոշ պատճառներ, — որոնց դո՛ւռուղը Ուսանողութիւնը կ'ըլլայ և որոնք գաղտնիք չեն մնար քիչ մը նրբամիտ եզրդին, — կը կասեցնեն Վարչութիւնը : Արդէն ասանկ կ'երթայ : Կեդրոնականի Վարչութիւնը ոչ իսկ կը խռովի իր անալալլ հանգիստին մէջ, Լուսաբանելու, լուսաբանուելու պէտք ալ չունի ան : Լուսթիւնը յարմարագոյն կացութիւնն է իրեն՝ չխանդարելու համար իր խաղաղ լծացումը, որ յուզուելու, լսուած ձայներէն աղքուելու փորձով մը կրնայ անհանգիստ ըլլալ, փոթորկիլ ու կորսնցնել իր հեշտալի անդորրութիւնը : Համոզուած ենք ասոր, ու տեսնուած ուղիդին դարձ մը, դէպի ան անկեղծ ու յանդուգն շարժում մը չենք սպասեր իր նուիրագոր-

ծուած աւանդապաշտութիւնէն : Ուրախ ենք միայն տեսնելով որ՝ անպայման համակարծիք դառնում է մեզի և մեր հրատարակութեան՝ նոյն իսկ Կեդրոնականի Ուսուցչական Մարմինէն մեծ մաս մը , որ , ինչպէս կը լսենք , զբաղուած ու խնդիր ըրած է մեր ահսութիւնը և ջերմ ջատագով հանդիսացած անոր : Ուրախ ենք նաև որ՝ կրթական այս կենտրոնական խնդիրին մասին մեր կողմը ունինք ձայնակցութիւնը հանրութիւնէն շատ լրջախոհ մեծամասնութեան մը , և խոհուն լրագրապետի մը , ինչպէս է «Բիւզանդիոն»ի Խմբագրապետը Բիւզանդ Քէշեան [*] : Ահա՛ համադումի մը ու ճշմարտութեան մը արժէքը, — խնդիրին մէջ կարեւորագոյն կէտը՝ մեզի համար : Կեդրոնականի Տեսչութիւնը նորէն կրնայ մնալ իր անալոյլ մրախին մէջ :

ԵՆՈՎՆ ԱՐՄԷՆ

[*] Հոս մէջ կը բերեմ «Բիւզանդիոն»ի Խմբագրապետի հայեացքը , որ Աղաբեգեանի համադասարիւթիւնը չեզոքացնող ազդու դասն է եղած , իր ցնդիւ-վերի ու բուծող տեսութիւններով յօդուածին յաջորդող էջի մը իսկ մէջ :

Մեր ալ կարծիք միշտ աւ եղած է թէ՛ մեր դպրոցներուն մէջ աշակերտները եւրոպական լեզուի մը խօսակցութեան վարժեցնելու ամէնէն զործնական եղանակն է նոյն եւրոպական լեզուով աւանդել այն դասերը՝ զորս աղաքը օտար լեզուով մըն ալ կրնան հասկնալ , և զորս անպատճառ հայերէն դաս տալու պէտք մը չկայ : Օրինակի համար , երբ աշակերտները Փրանսերէն քերականութեան ու Թարգմանութեան դասեր առնելու սկսեր են , բնաւ դժուարութիւն չկայ աշխարհագրութիւնը Փրանսերէն աւանդելու , յաջորդ տարին ալ ընդհանուր պատմութիւնը , յետոյ աստիճանաբար բնագիտութիւնը , բնագաղտնութիւնը , բնալուծութիւնը , չտիագիտութիւնը , մանաւանդ որ առաջիկային մէջ այլուր իրենց քննութիւնները Փրանսերէն պիտի անցընեն բոլոր այս ուսումներուն վրայ , և եւրոպական գիրքեր միայն պիտի ունենան այս մասին իրենց ծանօթութիւնները կատարելագործելու համար : Ոմանք , Ազգայնական է.թ.ի հետ , կ'առարկեն թէ այս տեսակ նորութիւնով մը մեր դպրոցներուն մէջ ազգային կրթութեան հիմքը խախտած կ'ըլլանք , թէ Հայ դպրոցին մէջ ամէն ուսումները հայերէն պէտք է աւանդուին , ինչպէս ամէն ազգ իր լեզուով կ'աւանդէ դասերը իր դպրոցներուն մէջ , են : Մեր կարծիքով , գիտութիւնները եւրոպական լեզուով ուսուցանելը բան մը չի պակսեցնիր աշակերտներուն ստանալիք մտաւոր պաշարէն Հայ լեզուի , կրօնի ու դպրութեանց վրայ : Գիտութիւնները կը սորվուին գիտութիւններու սիրուն , ոչ թէ հայերէնի կամ ազգային կրթութեան սիրուն : Քանի որ գիտութիւններու զանաքը եւրոպական լեզուներու միջոցով միայն պիտի հայմայնութիւն նոր սերունդին , բանաւոր է կանոնակարգել նոր սերունդը՝ զործնականապէս օգտուելու նոյն եւրոպական լեզուներէն , Փրանսերէն , անգլերէն կամ գերմաներէն : Եւ թէպէտ ամէն ազգ կը պահանջէ որ իր դպրոցներուն մէջ ամէն դասեր իր լեզուով աւանդուին , բայց զիտենք որ մեր լեզուն դպրոցէ դուրս ուրիշ լեզուներու չտի չի զօրեր նոր սերունդին հացի խնդիրը կամ գիտական ու արուեստական բարձրագոյն՝ դաստիարակութիւնը ապահովելու : Բայց , ամէն պարագայի մէջ , ո՞րքա աւելի շահաւէտ է նոյն իսկ ազգային կրթութեան համար . — Օտար լեզուները մեր դպրոցներուն մէջ պարտաւորիչ ընել կարգ մը չէզոք առարկաներու դասախօսութեան համար , թէ մեր նոր սերունդը ստիպել ամէն տարի յարանձուն թիւով օտար դպրոցներ յաճախելու , եւրոպական լեզուներու խօսելալարութեան սիրուն Ազգային կրթութեան հիմա ո՞րչափ մաս և բաժին ունին այն հազարաւոր Հայ աղաքը՝ օրոնք նոյն իսկ նախակրթարանի տարիքէն օտար դպրոցներ կը յաճախեն , միայն անոր համար որ իրենց ապագայ ապրուածին կամ արուեստական զարգացումին համար պէտք ունին զործնականապէս սիրանալու եւրոպական լեզուի մը :

ԲԱՐԵՐԱՐ ԿԵՂԾԻՔՆԵՐԸ , ՎՏԱՆԳԱԻՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

Անցածները Մասիսի էջերուն մէջ Տօմիկո «Կեղծիքը Արուեստին մէջ» խորագիրը կրող յօդուածով մը այս խնդիրին վրայ կարգ մը խորհրդածութիւններ կ'ընէր , մասնաւորապէս ներշնչուելով Էմիլ Գակէի վերջերս յայտնած գաղափարներէն՝ որոնց համաձայն՝ «արուեստը ըլլայ իսկական , ըլլա՛յ բնապաշտական կամ խորհրդապաշտական , չարուհական չինծուութիւն մը , արուեստակութիւն մըն է՝ զոր մարդիկ կը կտրծեն սքողել և չեն յաջողիր» : Ահա՛ դատում մը , յայտնուած ականաւոր գրազէտէ մը , որ ճշմարիտ ըլլալու ամէն հաւասարը կ'ընծայէ և որ շատ հեշտ պիտի չգայ գրականութեան մէջ բնապաշտ ուղղութեան ջատագոյններուն : Մեր մէջ ունեցանք Զօլարի և նմաններու գործերէն ներշնչուած ու խանդավառուած գրողներու սերունդ մը , — որմէ ներկայացուցիչներ դեռ շատ ունինք , — որոնք ամէն ստիժներու մէջ իրապաշտութեան ներքոյը հիւսեցին , իբր գրական դպրոցներու վերջին հանգրուանը , ուր պէտք էր գրականութիւնը լայնօրէն տեղաւորուիլ և այդ սահմանին մէջ զարգանալ ամէն ուղղութիւնով , իբր թէ արուեստը՝ երբ իրական կեանքը չի ներկայացնէր այնպէս՝ ինչպէս որ է , արուեստ ըլլալէ կը դադրի : «Արտաքոյ բնապաշտութեան չիք գրականութիւն . . . » գրեթէ էր և է ատանկներուն համոզումը : Բայց ահա՛ Գակէի և անկէ առաջ ալ ուրիշ խորհող և իմաստասէր միտքերու կարծիքով , գրեթէ օդը կը ցնդի իրական կեանքի հաւատարիմ պատկերը ըլլալու այն կարծեցեալ առաւելութիւնը՝ որով կ'ուղուէր գերազանցութիւն մը ընծայել բնապաշտ կամ իրապաշտ գրականութեան , քանի որ վերջին վերլուծումով՝ կը վճռուի թէ արուեստը , ըլլա՛յ նոյն իսկ բնապաշտական , ամէն պարագայի մէջ արուեստակութիւն մը , կեղծիք մըն է : Այս առդերով նպատակս չէ վարկաբեկել բնապաշտ գրականութիւնը , որ արդէն պէտք չունի ո՛չ իմ դնահատութեանս , ո՛չ ալ իմ պարտաւանքս կրնայ հոգ ընել : Գրական ամէն դպրոցներն ալ որչափ առեն որ կը ներկայացուն իրենց ընտրելագոյն վարպետներուն միջոցով , լաւ են և ունին իրենց ուրոյն առաւելութիւնները : Մարդկային միտքը ինքզինքը արտայայտելու չա՛տ ձեւեր , բազմաթիւ ճամբաներ ունի և ապահովաբար այդ ձեւերուն կամ ճամբաներուն զանազանութիւնը դեռ չէ սպառած : Բնապաշտութիւնը իբր գրական արուեստի բազմաթիւ ձեւերէն մէկը , թիւեւս ունի միւսներէն աւելի լաւագոյն և արուեստագիտական կողմեր , բայց ինծի կը թուի թէ ա՛լ միանգամ ընդ միշտ պէտք է որ հրաժարի ինքզինքը կեղծիքէ զերծ համարելու սա յաւակնութենէն , և անկէ ետքը , ոչ ոք

կ'արդիւ է զինքը որ՝ դարձեալ ջանայ և կարիւրն ընէ կեղծիքէ , արուեստակութենէ զերծանելու համար եթէ երբեք յաջողի — և չյաջողելը իրեն համար երբեք թերութիւն մը չէ — . միայն թէ փափաքելի պիտի ըլլար որ՝ կեանքը իր լաւագոյն կողմերէն միայն դիտէր և ուսումնասիրէր , և ընկերային ապականութիւններու մէջ չմտնէր , ներկայացնելու համար մեզի զգուշելի կամ հեշտագրգիւ պատկերներ : Ահա թէ ո՛ւր կ'ուղէի յանգիլ՝ ընելու համար քանի մը հոգեբանական դիտողութիւններ :

Անձնապէս համամիտ չեմ այն գաղափարին թէ՝ արուեստը չի բարեփոխեր կեանքը , թէ կրօնքին ուժը չունի մարդկութեան սովորական վիճակը բարձրացնելու համար , ինչպէս կ'եղբակացնէ Տօմինօ իր նոյն յօդուածին մէջ : Ժողովուրդներու անուս և սամիկ զառակարգերու համար , այո՛ , թերեւս կրօնքը ուժ մըն է , բայց զարգացած դասակարգերու ընկերական և անհատական կեանքին մէջ կրօնքը գրեթէ դեր չունի և զրականութիւնն է ազդող բարոյական մեծագոյն ուժը : Կը հաւատամ թէ զրականութիւնը անհատները և ընկերութիւնները բարոյացնելու գործին մէջ կրնայ մեծ դեր կատարել զոնք իր թափանցած ընկերային խաւերուն մէջ , և եթէ կրցած չէ կատարել , պատճառը ան է որ՝ պէտք եղած ուղղութիւնը առած չէ , սրովհետեւ զրականութեան մէջ բարոյականէն աւելի՝ արուեստի-հետեւած գերակշիւ դասուած է միշտ : Եթէ իտէապաշտ արուեստը կամ գրականութիւնը պայծառ , մաքուր հորիզոններ , կեանքի բարձր , ազնիւ խտէպներ ցուցադրած է առեւն առեւն , հոգ չէ թէ կեղծիք ըլլայ ան , անդին գոյութիւն ունեցած է ստուար գրականութիւն մը՝ որ անբարոյութիւններու , հեշտամտութիւններու , սոսիալներու և մարդկային ստորին քնազգներու և կիրքերու արտայայտութեան ամէն տեսակներուն պատկերներովը հրապարակը ողողած է , խիստ աղետաբեր աղքեցութիւն մը գործելով , աւա՛ղ , մարդկային միտքերու և անկէ ալ՝ բարքերու վրայ : Անոնք որ դեռ կը յամառին պնդելու թէ չարիքը պէտք է մատնանիլ ընել , իր մերկութեանը մէջ պարզել , զայն ճանչցնելու , անկէ նողկանք և դարչում ներշնչելու համար , և ասով կ'ուզեն արգարացնել զրականութեան այդ սեւը , ապահովապէս ծանօթութիւն չունին մարդկային հոգիին գործունէութեան օրէնքներուն և թաքուն միտումներուն վրայ : Մարդկային միտքը խիստ գերզգայուն քղա՛մըն է , որուն վրայ ամէն գաղափար , զգացում , մտածում անպատճառ տպւնորութիւն մը կը թողու : Ամէն վայրկեան՝ ինչ որ կը կարգանք , կը լսենք , կը տեսնենք , կը զգանք կամ կը խորհինք անհրաժեշտաբար կը տպւնորութիւն , կը դրոշմուի մեր միտքին վրայ , և թէպէտ մենք այս տպւնորութիւններուն չա՛տ փոքր մէկ մասին միայն գիտակցութիւնը ունինք , այսինքն՝ մեր կարգացածէն , տեսածէն , լսածէն , զգացածէն կամ խորհածէն չստ

ողջաիկ մաս մը միայն կրնանք վերյիշել և մնացած ստուարադոյն մասը
 կը կործենք անհետ կորստում , մասացութեան մատնուած ըլլալ , բայց
 իրականութեան մէջ ոչինչ կը կորսուի կամ կը մոռցուի անոնցմէ , այլ
 մեծագոյն մասը այդ տղաւորութիւններուն կ'երթայ կը մթերուի մեր
 գիտակցութեան ամենախոր ալքերուն , մեր ենթագիտակցութեան
 [subconscience] մէջ , ուր անոնք տեսակ մը անդիտակից ինքնաթեկադ-
 րութիւն ի գործ կը դնեն մեր ջղային կեդրոններուն վրայ , պատեհ
 տալիս սպասելով յայտնուելու համար : Մեր կողմէ հոգեբանական
 օրէնք մըն է թէ՛ ամէն գաղափար իր մէջ կը կրէ զինքը իրագործող
 ուժը , այսինքն՝ ո՛ր և է գաղափար որ տարրեր գաղափարով մը չար-
 գիլուի կամ չ'եղանակաւորուի , անպատճառ գործի կը փոխուի : Նմա-
 նողութեան [imitation] քնազգիին ու թեւադրութիւն [suggestion] և ինք-
 նաթեկադրութիւն [auto-suggestion] կոչուած երեւոյթներուն ալ ուժը
 ահա՛ ճիշտ հոգեկան այս օրէնքին մէջ կը կայանայ : Արդէն դուրսէն
 ընդունուած ո՛ր և է սոցաւորութիւն կամ գաղափար՝ ընդունուած պա-
 հուն՝ թեւադրութիւն մըն է , և ընդունուելէն ետք՝ տեսակ մը մնա-
 յուն ինքնաթեկադրութիւն , բայց ամէն թեւադրութիւն կամ ինքնա-
 թեւադրութիւն գործի չի փոխուի անոր համար որ՝ մենք մեր կամ-
 քի ու դատողութեան ուժով անոնց ամենամեծ մասը կը չեղփքացնենք
 և տեղի կու տանք միայն անանկներուն՝ որոնք մեզի օգտակար կը
 թուին : Այս իրողութիւնները պատշաճեցնելով մեր քննած գրական
 խնդիրին , ենթադրենք թէ՛ մէկը կատարեց ընթերցումը վէպի մը , ուր
 յոռի բարքեր կամ տիպարներ կը նկարագրուին՝ ընթերցողին առաջին
 տպաւորութիւնը պիտի ըլլայ անհրաժեշտաբար այդ բարքերուն կամ
 տիպարներուն նմանելու , զանոնք կրկնելու , այսինքն՝ կարգացածը
 գործի փոխելու ձգտում մը , բայց անմիջապէս դատողութեան և կամ-
 քի ուժով պիտի զսպէ այդ ձգտումը , որ սակայն երբե՛ք բոլորովին չպի-
 տի ջնջուի , այլ պիտի սպասէ թաքուն վիճակի մէջ , այնպէս որ երբ
 ենթական ապագային իր կեանքին մէջ ունենայ ա՛յն տեսակ վիճակներ
 կամ վարկեաններ որ այդ կարգացած վէպին այս ինչ կամ այն ինչ
 անցքը կամ գէժքը յիշեցնէ իբրեւ , անմիջապէս նոյն ձգտումը պիտի
 վերակրկնուի իր մէջ , թերեւս կրկին չեղփքացուելու կամ կրնայ ըլլալ
 նաեւ , գուցէ աղետաբար իրականութեան մը փոխուելու համար : Ահա՛
 թէ ի՛նչ կերպով գէշ ազդեցութիւն կրնայ գործել բարքերու վրայ յո-
 ոռի պատկերներ գծող գրականութիւն մը , որ իրեն նիւթ ունի մարդ-
 կային անասնական ընազդներուն գործունէութիւնը , բնազդներ՝ որոնց
 ուժը , աւա՛յ , դեռ ա՛յնքան հզօր է մեր մէջ : Ամէն մարդ թո՛ղ քիչ
 մը ուշադիր դիտէ իր խորհուրդներուն ընթացքը : Գիտակցութեան
 ամենախոր խաւերէն գաղափարներու զօրգորութեան կամ թաքուն
 ինքնաթեկադրութիւններու ուժով ամէն վարկեան մեր միտքի թատե-
 րաբեմին վրայ իրարու կը յաճորդեն պատկերներու , գաղափարներու շարք
 մը , որոնց մէջ եթէ կան շատ մը գեղեցիկներ , կան ալ աղեղներ ,
 ազատաններ և երբեմն ա՛յն ատիճան նողկալիներ՝ որ մենք նոյն իսկ
 կ'ամչնանք ատանկ բանի մը վրայ խորհած ըլլալնու համար : Վերցօ՛ւր
 մարդկային հոգիին մէջէն դատողութեան ու կամքին ուժը , և ահա
 այդ բոլոր տգեղ , աղտոտ , զղուելի գաղափարները եւ պատկերները

գործի պիտի փոխուին : Բայց մենք ապաստանած մեր դատողութեան
և կամքի ուժին , թերեւս պիտի ըսենք թէ թո՛ղ ազտոտ , յոսի պատ-
կերներ ուղածուին չափ մեր աչքերն ու ականջները տալաւորեն , թո՛ղ գէշ
կեանքի գոյափառներ կամ մտածումներ ուղածուին չափ մեր միտքէն անց-
նին դառնան , անոնք որ և է աղքեցութիւն չեն կրնար գործել մեր
վրայ : Անա՛ բուն իսկ սխալը : Մարդոց մէջ ստուար մաս մը որ ար-
դէն բնականէն տկար նկարագրի տէր է և գրեթէ զուրկ՝ կամքէ ,
բնաւ պաշտպանուած չէ յոսի գաղափարներու թելադրիչ և իրագործիչ
աղքեցութեան դէմ , և նոյն իսկ կամքի տէր անձ մըն ալ կեանքին
մէջ կ'ունենայ երբեմն վայրկեաններ՝ ուր կամքը և դատողութիւնը
կ'ընկճին , ուր ինքզինքը ենթարկուած կը զգայ իր բնաղբներուն և
դրումներուն աճաւոր աղքեցութեան , և աճաւոր տառն բարքերու թա-
քուն աղետաբեր գաղափարները զիրենք կ'սեպնոյ տրգելք մը չ'ըսնելով՝
իրենց գործը կը տեսնեն , չ'ակառակ ենթակային բոլոր բարի կամեցու-
թեաններուն և լաւ տրամադրութիւններուն : Ու յետոյ , երբեմն հո-
գեւանական բարդ պատճառներով ո՛ր և է կեանքի ու բարքի մասին
գաղափար մը մեր մէջ յարատեւ թաքուն ինքնաթելադրութիւն մը ի
գործ կը դնէ ու մեր միտքը կ'ողբնաճախէ [hanter] շարունակական աչ-
ցելով իրեններով , և այսպէս՝ կու գայ վայրկեան մը որ այդ գաղափարը
անդամագրելի ուժով մը տիրող կը դառնայ մեր էութեան մէջ և այն
ատեն անիկա իր այդ ուժով կրնայ կոխել անցնիլ դատողութեան և
կամքին յարուցած բոլոր ընդդիմութիւնները : Ամէն պարագայի մէջ
յոսի գաղափար մը թունաւոր մանրէ մըն է՝ որ սւելի կամ նուազ
երկար թխսումի շրջանէ մը ետքը կրնայ իր չարաբաստ աղքեցութիւնը
գործադրել որ մը չէ որ մը , օգուտ քաղելով մեր տկարութեան որ և է
մէկ պահէն :

Բաւական է որքան որ իրական կեանքը ազտոտ բարքեր , աղեղ
պատկերներ կը ցուցադրէ մեր առջև , բաւական է որքան որ լրագրու-
թիւնը ամէն օր աշխարհի ամէն կողմերը պատահած անբարոյութիւննե-
րու , գայթակղութիւններու , ոճիրներու , ջլախտաւորութիւններու երե-
ւակայելի ու աներեւակայելի ամէն ձևերը կը պատմէ ու կը սորվեցնէ
մեզի , գոնէ զրականութիւնը կրնայ հրաժարիլ ներկայացնելէ մեզի
կեանքի այդ տխուր կողմերը , վատասեւած ամբոխի մը այդ տխտաւո-
րութիւնները , որոնք զրական ձևի տակ աւելի մեծ հրապոյր մը կ'աղ-
դեն , աւելի հզօրացէս թելադրիչ են : Թո՛ղ ան , գրականութիւնը՝
կեանքի , բարքերու լաւագոյն , աղնուագոյն կողմերէն ներշնչուի լայ-
նօրէն , թո՛ղ իսկական , խաղաղիկ ու կեանքի երազային հորիզոններ
պարզէ մարդկութեան առջև , և այս կերպով անիկա ամէնէն մաքուր
գաղափարները պիտի ներմուծէ մարդկային միտքերու մէջ , որոնք հոն
առաջ պիտի բերեն բարեբար ինքնաթելադրութիւններ և այդ ինքնա-
թելադրութիւնները պիտի փոխուին օրհնեալ արդիւքներու : Իրաւ է թէ
զրականութիւնը այս ուղղութեամբ թերեւս կեղծիքներու պիտի գրմէ ,
բայց այդ կեղծիքները բարեբար կեղծիքներ պիտի ըլլան , որոնք չ'ա-
տելի նախապատիւ են քան այն միւս վտանգաւոր իրականի թախները :

ՅՈՒՆ. Գ.Ս.ՉՍ.ՆՃԵՍՆ

ԽՈՐՀՐԴԱԳՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՏՐԱԲԵԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՏՈՒՆ ԼՈՒՈՒԹԵԱՆ.—ՏՐԱԲԸ ԵՒ ՏՐԱԲԵԱՆՆԵՐԸ

Բ.

Տրաբեան աշխատութիւնը , տրաբեան սեղանատունը . — Երբ աղօթքը պատրաստէ , օրուան աշխատութիւնը և *coulpe*ը հարցաքննէ առջի իրիկուան աշխատութիւնը , կը սկսին գործի . ժամը առաւօտին եօթն է . փեթակադուռերին դործաւորները կը թռչին բզզելով՝ բայց միշտ լսին՝ մենաստանին շէնքերուն մէջէն , ոմանք լալիքը լուալու , ուրիշներ ճամբաները քերթելու կ'երթան , միս մաս մը կ'երթայ աղօթք հաց չինելու , զոր յետոյ կը բաշխեն աղքատներուն , և մնացածը ջրիղարի գործարանը՝ բանեցնելու համար այն հզօր մեքենաները , որոնք ամէն օր կը գործեն հազար քիլոյն աւելի ջրիղար : Մաս մըն ալ խմբովին կ'երթայ դաշտ կամ անտառ հունձքի կամ խոտ կտորի և փայտ կտրելու : Բաց ի՛նչն պարագայէն՝ ուր պէտք ըլլայ կարեւոր բան մը հասկցնել իրարու՝ անկարելի է որ փոխանակին որ և է խօսք . նշաններով իրար կը հասկնան և կ'օգնեն իրարու . հրաշալի դիւրաթիւքով թեմա մը՝ ըսվանդակ միաբանութիւնը հաւատարապէս կը կատարէ լսութեան և աշխատութեան գործնական հրահանգութիւնը : Աղօթք և ձեռական աշխատութիւն յաջորդաբար տեղի կ'ունենան մինչև ցերեկ . և այս յաջորդութիւնը կը տնօրինէ վանքին զանգակը : Առաջին նշանը արուելուն՝ բեռնակիր Տրաբեանը վար կը դնէ իր բեռը , ճամբայ յարգարողը վար կ'առնէ իր կնգուղը և գլուխը կը դարձնէ երկինք . փայտատ արեղաները եւ հնձող արեղաները կը ձգեն շատ անգամ ահաճութեամբ մը՝ իրենց բացօթեայ աշխատութեանց խնոտ հաճոյքը , եւ ամէնը միասին իրարու պատահելով , իրար հրելով մը՝ անխօս անբարբառ՝ կը մտնեն եկեղեցին տաճոյ ճամբան , ուր իրենց մրմունջները պիտի դաշնակցին :

Յերեկ կ'ըլլայ եւ հաշտարանը կը բացուի . հոն՝ ամէն կողմ երկայն երկայն սեղաններ դէմ դէմի կեցած են . անձնիւր արեղայ կը բազմի իր փոքրիկ սեղանին առջեւ ճաշի . մասնիկ մը հաց , խնձորօղիի բարչ մը , պնակ մը ապուր , բանջարեղէններ , պանդներ՝ այս է Տրաբեանին սովորական ճաշը : Միայն հիւանդ եղած ատեն միս կ'ուտէ : Սեպտեմբեր 14էն մինչև Չտաիկ ամէն օր պահք կը լսեն . Հոգեգալուստէն մինչև Սեպտ. 14 չարաթը երկու անգամ ծոմ կը լսեն՝ եթէ միայն տաքը և աշխատութեան շատութիւնը արգելք չըլլան : «Ծոմը և աշխատութիւնը , կ'ըսէր օր մը Նաբոլէոն Գ.ի՝ Սդառաշի ալճերիական արաբեան Աբբան , Տրաբեաններու լաւագոյն խոհարարներն են» : Եւ բանը ճիշդ էր . ծոմը և աշխատութիւնը կ'անօթեցնեն , և Տրաբեան մը

երբ անօթենայ՝ երբեք չտրանջեր իր սովորական ճաշին համար : Ան երբեք չէր զգոճար պարտիզպան եղբորը հասուցած թար՝ ու կանանչ բանջարեղէններուն համար . և երբեմն այդ համեստ սեղաններուն վրայ կ'երեւան այն տեսակ կազամբներ , որոնց պիտի նախանձէր Բարիզի արուարձաններուն մէջ հասած նորիքը [primeur] : Յաճախ ճաշին միջոցը Տրաբեան մը , որուն մէկ մեծ սխալը հրապարակուած է առաւօտեան coulpeին մէջ՝ կու գայ կարգով իր եղբայրներուն ոտքը համարուելու , որ իրենց կարգին պատուադրութեամբ կը խանդաղատին այս կամայական խոնարհութեան վրայ : Եւ այս ամէնը կը կատարուի առանց արուեստակեալ ձեւացումներու , պարզ , գրեթէ զուարթամտութեամբ մը : Այս անձնաշարչարութիւններուն մէջ՝ գրեթէ չիկա՛յ հանգիստացոյց բան մը . չիկա՛յ այս խոնարհութեանց մէջ ցուցադրական ձեւ մը . Տրաբեան մը ընդհանրապէս այնքան կ'իւրացնէ իր կարգը՝ որ զայն կը կատարէ աներեւակայելի անաշխատութեամբ :

Իրիկունը, Տրաբեաններու պարտաւորութիւնները , աշխատութիւնները . — Առտուան պէս՝ իրիկուան դէմ ալ նոյն կանոնադրութեամբ տեղի կ'ունենան հետզհետէ՝ միաբան աղօթքներ , դաշտային կամ արուեստագործական աշխատութիւններ , ընթերցումներ և խրկումներ . Տրաբեան մը յաճախ կը փոփոխէ իր աշխատութեանց տեսակը առտուընէ մինչև իրիկուն , որովհետև իրեն համար աշխատութիւնը ո՛չ միայն մենաստանը ապրեցնելու և իրենց օրուան սնունդը փոխադարձելու միջոց մըն է , այլ նաեւ՝ ձեռով մը ըսելու համար՝ կարգապահութեան գործիք մը , կամքի հրահանգութիւն մը և անձնութեան անդուլ փորձ մըն է : Տրաբեանը՝ պարտական է միշտ պատրաստ ըլլալ ամէն տեսակ աշխատութեան , որ կը հրամայուի իրեն՝ Աբրային կամ Մառանապետին կողմէ [լանքին մատակարարը կը կոչուի Մառանապետ] . պէտք է որ՝ օրինակի համար՝ անմիջապէս թողու Մատենադարանը , ուր երգարաններ կ'օրինակէր , և երթայ ջրելու թաւուտ տնկատան մը կամ տաշեղ ջարդելու . ներելի չէ իրեն մերժել ո՛ր և է գործ : Պարտաւոր է բովանդակապէս ինքզինքը տալ աշխատութեան , այն մշտնջեան օրէնքին համեմատ , որ կը տրամադրէ մարդուն աշխատասէր ըլլալ , լայց հնազանդութեան օրէնքին համաձայն՝ իրաւունք չունի ինք ընտրել իր աշխատութիւնը : Առտուն Ս. Հայրերու մատենադրութիւնները ընթերցող կամ ատաղձ բանող Տրաբեանը՝ իրիկունը կը կոչուի յաճախ պանրատունը կամ խոզանոցը , տրաբեան մենաստանին մէջ՝ կա՛յ անխախտ նախասկիզբ մը այնպէս հրահանգելու մարդ արարածը՝ որ կամու զիմանայ ամէն զրկումի , ամէն ներհակի :

Եւ այդ ներհակներն ալ կը դառնան կ'ըլլան ուրախութիւններ . ասով քաջ կը հասկցուի Տրաբեանի մը՝ առտնին կենցաղը , ժամանակակից վիպագիր մը , Պ. Հիցոմին , կը հանգիստացնէ իր վերջին գիր-

քերէն մէկուն՝ En Routeի մէջ Տրաքեան եղբայր մը, որ խոզա-
րածութիւնը իրեն զրօսանք ըրած՝ այս զբաղումին մէջ կը գտնէ ուրա-
խութեան զարմանալի աղբիւրներ։ Այս վիպացեալ անձը կը կոչուի
եղբայր Սիմէոն, որ իրական Տրաքեանի մը ճշգրիտ նմանութիւնն է, և
ինք կը մտածէ որ վշտակրելով, խոնարհամտելով, տալով ինքզինքը
ամէնէն անարգ զբաղումներու՝ կը քաւէ մարդոց գործած մեղքերը, և
կ'ողոժքէ կը դարձնէ Աստուծոյ անոնց համար պատրաստած պատիժը .
ասոր համար ահաւասիկ եղբայր Սիմէոն ինքնամոռացութեամբ հաճոյք
կ'իմանայ խոզարածութիւնէ։ Այս հաւատքով է որ Տրաքեանները կը
դիմանան իրենց խտամբեր կենցաղին, և այս հաւատքով է որ կը
կքին այս աշխատալից խիստ զրկանքին տուչիւ և կը դռնեն հոն հա-
ճոյք, և իրենց նեղութիւնները կը դռնան կ'ըլլան անուշութիւններ։

Անկողնաւորս, հասարակաց հանգիստը. — Այսպէս կը յաջորդեն
իրարու Տրաքեանի մը տունջենային զբաղանքը. թիթեւ, նախաճա-
շէն ալ թիթեւ, նախընթրակ մը վերջ կը դնէ անոնց։ Յետոյ Տրաք-
եանը հինգուկէսին միջոցները կը կարդայ, կը կատարէ հանգստեան
աղօթքը և մտածականը. 7 ին վերջապէս այդ լռին ստուերներու ան-
ցահանգէսը ճամբայ կ'ելլէ դէպի նշարան. միաբանաբար կ'աշխատին
ու կ'աղօթեն և միասնաբար կը քնանան։ Նշարանը՝ ընդարձակ ու
անդարդ սրահ մըն է, փոքր միջնացանկեր՝ անկից ձեղունին՝ կը նշա-
նակեն խուցերուն որմածը. խուցերը չունին բնաւ դուռ, այլ մուտքէն
կախուած է գորշագոյն պատտառ մը՝ իբր դուռ և վարագոյր, ներսը
կայ իբր կարասի՝ բնակի դարգիւծ մը. այդ դարգիւծին վրայ են կիտ-
ուածեալ յարդանկողին մը, յարդալից բարձ մը և ծածկոցներ։
Տրաքեանը՝ նոյն իսկ երբ հիւանդ ըլլայ՝ պէտք է քնանայ իր ցերեկ-
ուան հագուստներովը. եօթը ժամ կը պառկի այդ բնատարր և կարճ-
բայարդար անկողինին վրայ. երբ կը զարնէ կէս գիշերուան պաշտա-
մունքի զանգակը՝ Տրաքեանը անմիջապէս ոտքի ելլելով կը սկսի նոր օր մը՝
խոտորէն համանման առաջինին։ Եւ այս կարգը անփոփոխ կը տեսէ
մինչեւ գերեզման. կը թռի նաեւ թէ մահուան ձեւակերպութիւններն
ալ պարզուած են այս կրօնաւորներուն համար, ինչպէս եղած են կեան-
քի կարեւորները։ Երբ հոգեւորքը սկսի՝ գետին կը դնեն մահամերձը
մոխրածածուկ յարդանկողինի մը վրայ, որ ամէն Տրաքեանի մահիճն
[մահու անկողին]է։ Հոգեւոր կրօնաւորին կը զգայեն ճշգրպէս՝ թէ
ամէն բան լմնցած է. մահուան գալէն առաջ՝ կը հաստատեն ալ մա-
հը. ցաւի այս տարօրինակ անկողինին վրայ տեսնուած են Տրաքեան-
ներ՝ ժողովներ արձակելով իրենց մնացորդ եղբայրներուն, որովհետեւ
բոլոր եղբայրները մահամերձ Տրաքեանին չուրջը կու գան՝ միշտ լռին և
աղօթաւոր՝ յուզարկուոր հոգիին, զոր յաւիտեանականութիւնը կը
կոչէ։ Երբ հոգին կը թռչի՝ Տրաքեան գերեզմանատունը, որ խան-

զաղաւակի բան մըն է իր խտտակրօն պարզութեամբ , կ'ընդունի մահացեալ բնակիչ մըն ալ՝ կապուտ տմէն բանէ մահուան մէջ . ինչպէս էր կենդանութեանը Դագաղ մը անգամ չունի իր չքեղանք , անկէ ետքը հողին կուտան զայն միւս Տրաքեաններու քովիկը , որոնք առած են զինքը այդ վսեմ հանգրուանը , կը դնեն փօքրիկ սպիտակ խաչ մը իւր նշան անոր հանգստեան վայրին , և ամէն տարի ամիս մը հանգուցեալ Տրաքեաններու յիշատակը կը վերակոչուի երկարապաշտօն , այնպէս թախանձաղին՝ որ լսողը կը կարծէ թէ կենդանի Տրաքեաններն ալ մահուան կը դիմեն պաղատանքով :

Հասարակաց կեսնիք եւ անշշունջ յոռիքիւն . — Առտունէ մինչեւ իրիկուն և մինչև իր կեսնիքին իրիկունը՝ հետեւեցանք Տրաքեանին . երբեք մինակ չգտանք զայն : Տրաքեան մը միշտ եղբայրներուն հետ է աշխատութեան և հանգիստի , ճաշի և մատուոյն մէջ , նոյն իսկ կտրուցած ատեն , նոյն իսկ խովման և իմացական աշխատութեան չորս ժամերուն , որ չնորհուած է իրեն օրուան մէջ հոս հոն . հասարակաց սրահի մը մէջ է ան : Ուրիշ տեղուանք ալ երբեք չլսուիր Տրաքեանին ձայնը . Տրաքեանքին մէջ չկայ երբեք հասարակաց խօսակցութիւն . զրուցատրութիւն և զբօսանք անձանթ են հոն . Տրաքեան մը՝ կը խօսակցի մեծաւոր Աբրային , անոր փոխանորդին կամ իր խոտովանահօր հետ , ասկէ զատ խօսք չունի ան բնաւ . Տրաքեանի մը իր կրօնակից եղբոր հետ խօսելու չնորք չատ դժուարութեամբ կը տրուի , և այնքան դժուարութեամբ՝ որ ընդհանրապէս երբեք չխնդրուիր :

Յետոյ երկու պարտականութիւն կան Տրաքեանի մը վրայ , պարտականութիւն միաբան կենցաղելու , պարտականութիւն լռելու . իր նմաններուն անխախտ հակողութեան ներքեւ ապրեցնելով Տրաքեանը՝ մենաստաններու կանոնադիր անձեր , որ և մարդկային հոգիին քաջածանօթ էին , կը յարմարադրէին զայն օրինակ ըլլալու իր շուրջիններուն և օրինակներ աւնելու անոնցմէ . Տրաքեան մը կ'օգտուի մարդկան յարաբերութեան մէջ եղած հղօրիչներէն . ան չազդուիր երբեք մարդկան յարաբերութեան մէջ գտնուած անկարգ ընթացիւններէն :

Ճրակաւոր Տրաքեանները Հոռոմի դաշտալայրիւն մեջ . — Հաստատ և յաճախ տաժանագին աշխատութիւն , գիշերային և առաւօտեան սղօթք , անձնահարութիւն , բացարձակ լռութիւն , Տրաքեանը կը տանի այս ամէնուն յանուն այն կանոնին՝ որ կը վարէ իր կարգը : Աշխատութիւնը աշխարհի օրէնքն է . Տրաքեանը իր անձին իսկ համար կը ճշգրտէ ու կը ծանրացնէ խտտութիւնը այս օրէնքին՝ փոխարկելով զայն մենաստանի պարտականութեան մը , որմէ արձակուելու իրաւունքը չունի : Այսպէս դարբնուած խիղճերէ հնար է պահանջել՝ որ աշխատութեան այս պարտականութիւնը մզեն մինչև իրիտ աստիճանի մը , և Հոռոմի շուրջը հաստատուած Տրաքեաններն ալ այսպէս են : Աչք առածին չափ

լայնատարր այդ դաշտին մէջ , ուր կան երկայնաձիգ ագուգաներ , ջերմը անընդհատ կը դարանի մարդ տարածին , և այն ընդարձակ վայրը՝ հռոմէական պետութեան ատեն բարգաւաճ՝ հիմա անմշակ է : Պիոս Թ. դիմեց Յրանապի Տրաքեաններուն , որպէս զի դիմագրաւելով մնացորիս հիւանդութեան՝ հոս հոն ստեղծեն մշակութեան և առողջաւետութեան ուղիներ . Սէն-Բոլ-Դրուաֆոնդէնի կաթողիկէին և Սէն-Գալիսդի գեանադամաներուն շուրջը՝ Տրաքեանները շատցուցին Խլիալիքիւններ որոնք կը պահակերեն ընդդէմ տենդի Բաւական Տրաքեաններ շատ փնտուեցան այդ գործին մէջ : Առողջաւետելու համար այդ դաշտավայրը՝ պէտք է շատ ջանք է զոհողութիւն : Մեծ Տրաքավանքը , այն վայրը ուրկէ արձակուած են այս գաղթականները , է միանդամայն դպրոց մը հրահանգութեան և հզօր ստեղծիչ մը կրօնական գործունէութեան :

Տրաքեանները՝ քրիստոնեայ ու կաթողիկ նոր կաղապարի մը մէջ՝ շարունակութիւնն են Ենդադղիի հինաւուրց Եսսենեաններուն , որոնք կը բնակէին մեծ մասով Յորդանանի բարեքեր եզերքը և մասամբ Եգիպտոս՝ Մերիսեան լիճին շուրջը , և որոցմէ ելան՝ Մովսէսէն ի վեր բոլոր սուր դպիրներուն դասը : Ասոնք ունէին տեսակ մը խորհրդանուիրութիւն [initiaion], զոր կը մատակարարէր անապակի բաժակով իրենց նահապետը՝ յաճախ հարիւրամեայ ծերունի մը [որովհետեւ Եսսենեանները ընդհանրապէս երկարակեաց կ'ըլլային՝ իրենց սրբութեան և քուսակերութեան պատճառով] : Պիլիսագորեանները և եգիպտական Ամոն-Ռայի՝ քուրմերն ալ՝ մեծ նմանութիւններ ունէին Եսսենեաններուն հետ . Յիսուս ալ՝ կ'աւանդուի թէ Եսսենեաններուն քով մարդուեցաւ իր երիտասարդութեան լուսամփօփ օրերուն և անոնցմէ խորհրդանուիրուեցաւ մարգարէութեան քուղարկուածքին [arcane] : Հրէական հին մաքուր աւանդութիւնները և մարգարէական տուչութիւնները իրենց վերապահուած էին : Եսսենեաններու կարգին վրայ գրած են՝ Յովսեպոս և Փիլոն հիներէն , ու Ed. Churé նորերէն , ինչպէս նաեւ անգլ . Աստուածաբանական Բառարանը . Եսսէն , Եսէա՝ ըսել է սուրբ և բժիշկ , որովհետեւ մարմնական ու հոգեբանական բժշկութիւններ ալ կ'ընէին գլխաւորապէս : Այս տեսակ Հայ կարգի մը հաստատութեան համար՝ արդի գիտութեանց ու պահանջուններուն համաձայն՝ շատ աշխատած է ժամանակակից Հայ իմաստասէր անձ մը , և արգարե՝ շատ գրող , շատ խօսող , վիճող , քննող , խուզող , յուզող և փռաբարբող վանականներուն և վարդապետներուն համար՝ լաւագոյն և սրբագոյն զգաստութեան և հոգեւոր լուռ գործունէութեան մեկուսարան մը՝ կրօնական չքնաղ արդիւնքներ պիտի կրնար տալ : Աթոսի յոյն վանականներն ալ տեսակ մը քրիստոնեայ Եսսենեաններ կրնան համարուիլ : Նոյն իսկ Հրէաներու մէջ՝ Եսսենեաններու նման կա'յ մինչև այսօր [Ալճերիոյ մէջ] վանակեաց միաբանութիւն մը՝ Սաղմոսող Նիքայրնէր անու-

հով , որ կամաւ աղքատացեալ աղօթող և մտաթուղ խախտմանը քն-
կերակցութիւն մըն է . ասոնք կ'աղօթեն ու կ'ազաւջխարեն մարդկու-
թեան մեղքերուն համար , և իրենց մէջ կը գտնուին շատ խմածառէր
ու բարեգործ մարդիկ , քրիստոնէական այս այլասէր գաղափարը շատ
հի'ն է՝ այսպէս՝ և միջնադարին սրբանուէր Հրեաներու մէջ ալ ևս
կը տեսէ մինչեւ հիմա[*] :

Սուրբերը ամէն ազգի մէջ՝ ամէն՝ սեղ ու ամէն ժամանակ՝
սուրբ են :

Թարգմանաբար ԅ. Գ. ՄԲՄԸԲԱՆ

[*] Անգլիոյ մէջ Ուէզլեանները և Գուէլքընները՝ նոր ետեմեաններ կրնան համարուիլ :
Իսկ Չինացիներու , ճարմաներու , Թիպէթի Լամաներու և մանաւանդ Հնդկներու մէջ՝ ան-
համար բազմութեամբ կը գտնուին սկիզբէն մինչև այսօր՝ նման մասնող նուիրեալներ : ԅ. Գ.
Մրմըրեան անձամբ այցելած է Պաղեստինի Տրաքեաններու վանքը 1902ին , և հարցախոյնելով
նկարագրած է զայն ամէն տեսակէտով իր Ալեքսիա յ'Մուսաղէմ ուխտաւորական
գիրքին մէջ :

Վ Ի Լ Ա Ն Է Լ

Կը ծփծփայ , կը վիլակի ,
Թանձր վիժակը պատուհանի ,
Որ կը ցանկ գոյնն ելակի :

Ու կը պիտեմ ես կողմնակի ,
Նուրբ լոյսը որ բոլոր չորս դիւ ,
Կը ծփծփայ , կը վիլակի :

Կը կախաւ բոլորակի
Սրբալոյսը հաճանքերից ,
Որ կը ցանկ գոյնն ելակի :

Ու արեւը ցնցուղ շողփի ,
Սմբողջ շուշան , վարդ ու հարկիւ ,
Կը ծփծփայ , կը վիլակի :

Անհուն ծաղիկը երկինքի ,
Յարդաւառայլ , բոսորագիծ ,
Որ կը ցանկ գոյնն ելակի :

Թանձր վիժակը պատուհանի
Լոյս կ'անձեռեւ բոլոր չորս դիւ , —
Կը ծփծփայ , կը վիլակի ,
Ու կը ցանկ գոյնն ելակի . . . :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՍՄԵԱՆ

Ա Մ Փ Ւ Ա Ր Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն

Փունջ շինելն աւելի դժուար բան չի կայ : Ծաղիկները իրենց երանգներուն ու բոյր-
բուն համեմատութիւնով , ներդաշնակութիւնով քով քովի բերել , մէջքերնուն ժապաւն մը
անյընել , կ'սղել . . . զիւրին զօրծեր չեն : Միւս կողմէ , յաճախ ծաղիկները , առանց
փունջ կապողին ձեռքին զեղեցկարուեստ օժանդակութեանը , իրենց հրապուրիչ անարովը և
աշխարհն հմայելովը կը բաւեն ինքեմ շքեղ սիրունութիւն մը կազմելու :

Արեւածաղիկը դաշտի մը կողին վրայ հիանալի կ'երեւայ . հրանունկը արուոր չէ՞ երբ
փունջի մը մէջ իր գլուխը կը ցցէ . շուշանը Թառառներու ընկերութեամբ տարածութեան վրայ
մարգերուն իշխանութիւնը ըլլայ կը թափ :

Բրիզամէմէօյ սրամտութեան ծաղիկներէն կապել փորձած փունջս չեմ գտեր Թէ ի՞նչ
ապօստրութիւն պիտի ընէ ընծեր, ողներուս վրայ : Նոյն խի ինքը , անզուգական երգիծա-
բանը , Թերսո չի հաւնի զառաւորութեանս , իր միաբի պարտէզին արտադրութիւններուն
կոթունները կարտած , առէջները կտրտած զանկալ ՚՝ Ասոր մէջ ալ ճաշակի խնդիրը իր
անխառնափելի ներկայութիւնը կը զգացնէ :

Ճանաչած եմ փունջի մէջ արուոր երեւոյ ծաղիկները միայն հաւարել : Միւսները պէտք
է երթալ իրենց հողին վրայ տեսնել , հո՞ն ըմբռնեն անոնցմէ ծորոյ հեշտախափի զգալու-
թիւնը :

Յետոյ , Եգիպտոս հեղեարանին Շոգ Մոգ զապախարներէն , սրամիտ Բրոնիկներէն ,
Բուսյի Ծաղիկներէն հաւարած , կարգի դրած , յարմարեցած ամբողջական ուրիշա-
րարանութիւն մը , կրնայ նաև օգտակար հանդիսանալ **Մաւիսի** վերջին Դրական Մրցումին ,
սերգիծական Դրականութիւնը Պարտնականեմ Ետքս :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

*

Յիւր կիներու պէս քրտնիկազիրներն ալ իրենց capriceները ունին ,
զորս պէտք է զօհանջնել :

*

Չեմ յիշեր թէ ո՞ր թիւրթին մէջն էր որ կարգադիր թէ՛ Մաքրիգիւ-
զէն և կամ Պէյքօղէն — տեղը կարեւորութիւն չունի — երկու cousin
germainներ — տարբեր սեռէ , ըսելու պէտք կ'այ — արածնուած են ,
բայառարար , պպակի խորհուրդը ընդունելու , որովհետեւ . . . որով-
հետեւ . . . ինչ ալ դժուար է ըսելը . . . որովհետեւ օրիորդը իր նախ-
կին խղճեմէն և ապագայ ամուսինէն կանխաւ սիրոյ երախայ . . . րիք
մը կորզելով միտոյին տակ պահած էր այնքան անզուշտութեամբ որ՝
քսան մէթրօ հեռուէն կը տեսնուէր ինչ որ օրէնքի մարդերը կը կոչեն
le corps de délit . — Ասկէ ետքը , ամէն անոնք որ այսպէս կամ այնպէս
իրենց մէկ գեղանի խղճեմէն զարնուելու պատճառներ կ'ունենան և
փափաք կը յայտնեն մէկ բարձի վրայ ծերանալու , ուրիշ բան չունին
ընկիւք , բայց եթէ առաջուց ընել ինչ որ պիտի ընէին ետքէն :

C'est plus pratique et c'est délicieux .

. . . Բնզինդ առնելու համար դիտե՛ս ինչ պէտք ևս ընել : Նախ
ինքզինքիդ տուր բարեկեցիկ վիճակ մը , եւ շահեկան մըն ալ քու-
զինիդ :

*

Հաւաքում մը ուր կ'ընկ , աղջիկ չկայ , կը նմանի հացկերպի մը , ուր զինքն մոռցուած է :

*

Ռէաֆէրենէն , Բաքէնէն , Ռօմնիցէն բերուած արդու զարդեր չկային թերեւս սրահին մէջ , բայց թեթեւ *soie de chine* է , *foraj* է եւ նոյն իսկ քաղաքանէ չիւտուած չրջազգեստներ կային՝ որոնք խելքը թոյնիկ կուտային անոնց որ պարտնակեալը պարտնակողէն նախադաս կը համարին :

*

Սէրաֆիմի ըրածը զարմանալի է :

Կիրակի գիշեր պիտի կարգուէր եւ չալաթ իրիկուն հարուածով մը ինքզինքը սպաննեց :

Տնայէնին բրածը դիտէ՞ք ինչի կը նմանի : Միաքի կը դնես Երուսաղէմ երթալ , Հաճի Տալուտի շողենալը կը նստիս , կ'երթաս կ'երթաս եւ Եւֆրատ հասնելուդ պէս կը դառնաս եւս . կ'երեւայ թէ հակառակ դերձակ բլլալուն՝ ամուսին բլլալու համար պէտք եղած կերպորը չկար քովը : Բայց քանի որ դերձակ էր , նախ չափել չափչիւկուէր եւ հաքէն կլլալու էր ճամբայ : Ամուսնութեան քրօյան չըրած ինչո՞ւ ձգեց գնաց : Գազարի՞ք : Իր կեանքի թելը մկրտանց խեղճ մարդը : Չեւքի սովորութիւն : Բաճկոն մը , տարտա մը , *ոքսկնիօթ* մը իրեն համար կարելի բաներ էին , իսկ ամուսնութիւնը անկարելի : Ըրածը *gaffe* մըն է ազահովատէս , որ եսմա չի վերցնիր : Եթէ կարգուէր , *doublure* մը պիտի ունենար , չուղեց : Օձիքէն բռնող մը չգտնուելուն համար :

*

Այն օրը ուր մեր եկեղեցականները կ'ինքեք պիտի բազկանան , — կ'ին ժառաարան բլլալէն հաքը ինչո՞ւ կ'ին քահանայ ալ չըլլայ , — օ՜հ , այն ասին մէկ դօրծ մը պիտի ունենանք մենք էրիկ մարդիկս : Մեզանչիկ տատունէ մինչեւ իրիկուն , չարունակ մեղանչիկ , ձեւքերտուտ եկածին չափ մեղանչիկ : Եւ ասիկա , միայն անոնց փեշերուն տակ կուրկի եղածին չափ յաճախ խոստովանանքի երթալու համար . . . :

*

Մարդկութիւնը մօրու մըն է , որ իր զաւակներուն սոս զը հաղիւ քանի մը օր կը բռնէ :

*

Անբարոյականութիւնը մերկ ծիծեր նկարագրելը չէ , անբարոյականութիւնը արժանիքներ ուրանալը եւ պատուաւոր մարդ մը ազարակ ուղեղն է : Ես այսպէս կը հասկնամ կեանքը , այսպէս կը բացատրեմ պարտականութիւնը եւ այսպէս կը գտնաւ իմ բարոյականը :

*

Բարոյականը դրամին կը նմանի : Չունեցողը ունենալ կը ձեռնցնէ եւ ունեցողը չունենալ :

*

Ագամանդադարդ մահճակալի մը և յարդէ խշտակի մը մէջ սպառ-
ուած սէրը միեւնոյն համը ունի :

Սիրոյ մէջ երկու թեւերու ունեցած ազդեցութիւնները՝ աշխարհիս
բոլոր ուրիշ զօրութիւնները չեն կրնար տանիլ :

*

Բարեգործական հանգէսի մը մէջ :

. . . Օրիորդ Թօսքանի իր անշուղական զեղեցկութիւնովը — Ռի-
պէնէ դժագործած, գլուխ մը պաշտելի գիմագլծերով, որ վեհօրէն կը
բարձրանայ ուսերու ամէնէն հոլանիին վրայ, զեղեցկութիւն մը որ
կարծես ընդօրինակած ըլլայ Վէրօնէզի մէկ պատկերէն և կտմ Ռաֆա-
էլ Սանցիօի մէկ նկարէն, կեանք առած Ֆօրնարինս մը մէկ բառով . . .
Ի՞նչ պէտք կայ զրիչս չարչրկել, դադափար մը տալու համար ձեզի այն
դիւթիչ տպաստութեան վրայ զոր Օրիորդ Թօսքանի գործեց : Պզտիկ
օրինակ մը :

Ծառի մը ետին պահուըտած հարուստ ծերուկ մը կը նշմարեմ որ
մէջտեղ չեկեր . . . քանի մը զրուշ տալու վախէն :

Կը խնդրեմ Օր. Թօսքանիէն որ ծաղիկներու կողովը աւնէ և ինծի
հետ դայ . . . pour faire casquer ce vieux Harpagon .

Երկու սոսուժով դէմ առ դէմ կը գտնուինք ծերուկիս հետ :

Մէկ մը ծաղիկներուն կը նայի, և երկու անգամ զանոնք ներկա-
յայնողին : Անմիջապէս, անանց ժամանակ կորսնցնելու ձեռքը դրպա-
նը կը դնէ և փայլուն դրամ մը կը նետէ կողովին մէջ, անանց ծաղիկը
առնելու :

— Ի՞նչ աճապարանք, դիտել կու տայ Օր. Թօսքանի :

— Արեւին գիմացը շատ չեմ կրնար կենալ, Օրիտ'րդ, կ'աւելցնէ
ծերուկս, որմէ շատ աւելի դրամ սպասելու իրաւունք ունէի, բայց
այդքան galanterie, երբե'ք :

*

Մէրը տեսական ըլլալու համար փոքրիկ doseով պէտք է որ աւնուի
arsenicին պէս :

Քիչը կեանք կու տայ, շատը կ'սպաննէ :

*

Տիար և Տիկին Սեղառեան Արաքսի անունով քան տարու ազնւոր
աղջիկ մը ունին : Տիար և Տիկին Սիրունեան քաննչինգ տարու աղայ
մը ունին, Լեւոն անունով :

Կարծեմ ըսածիս մէջ հրէշային բան մը չիկայ . մարդիկ կան որ աղ-
ջիկ դաւակ մը ունին և ուրիշներ մանչ դաւակ : Ամէնէն երջանիկները
անոնք են որ ո'չ մէկը ունին եւ ո'չ միւսը :

*

ԲԱՅ ՆԱՄԱԿ

«ՎԷՆԵՐԻՍ»ԻՑ

Մասիսի 43րդ թիւին մէջ իմ մէկ յօդուածիս մասին քանի մը դիտողութիւններ ըրած էիք : Բուն անուննիդ զիտնալ չպիտի փախարկիմ , եթէ արդէն կասկածած չէք . բայց պիտի սիրէի Ձեր իսկ ստորագրութիւնը կարդալ այն իմաստուն [?] դիտողութիւններուն տակ՝ զորս հաճած էիք ընել Ձեր հանձարէն ըստին մը համար ըլլալու համար անշուշտ : Ռաբալտիւնս կը յայտնեմ այն յաջողութեան համար՝ զոր ունեցած էք՝ «Հայ միտքը փիլիսոփայութեան հանդէս» յօդուածիս մէջէն «Թիւր ըմբռնումներ և յախաւն վճիռներ վեր առնելով» :

Բայց նախ հարցնել կը փորձուիմ Ձեզ թէ՛ ընկերաբանական գիրքեր կարդացե՞ր էք արդեօք , ժողովուրդներու կեանքով զբաղա՞ծ էք ըստա . եթէ այո՛ , իրաւունք պիտի տամ Ձեզ Յօդուածիս Ա. մասը թող աղէկ մը կարդա՞լիք , որպէս զի լաւ ըմբռնէիք թէ ի՞նչ ըսել կ'ուզէի : Այսօրեան օրս տակաւին երկրագործ , խաշնարած , որսորդ , ծափառիկ , բաղախանդիր ժողովուրդներ կան , որոնք սուրբն ատեն որ այդ կեանքը սպրիկն , չլիտի ունենան քաղաքակրթութեան ժողովուրդներու «հոգեկան պահանջումը» : Շատ կը ցաւիմ որ այս վերջին բացատրութիւնը չէք հասկցեր , որով կասկածիլ կը փորձուիմ թէ՛ դուք հաւանականաբար այդ պահանջումը չունիք Ձեր «Անտաշխարհ»ին մէջ : Ներողութիւն , այս բարձր հոս անգամ մըն ալ գործածելու ստիպուած ըլլալու համար : Զրաքեանին համահունչ գիրքը չեմ կարդացած . բայց կ'ուզեմ հարցնել թէ՛ այդ բառը իր զոյւթիւնը անո՞ր կը պարտի : Անցեալները մէկն ալ գրած էք թէ՛ ոտանաւորներէս մէկուն մէջ գործածուած «բոց նայուածքը» բացատրութիւնը առեր եմ եղեր՝ ինչպէս ան իր սուր [?] աչքերովը դիտեր է՝ Արաւշէս Գարութիւնեանէն : Բնաւ միտքէս չէր անցներ որ՝ բառերն ալ այս կամ այն մարդուն մեծ նաշնորճը եղած կրնան ըլլալ :

Յունաստան և Իտալիա , եթէ գեղարուեստի և փիլիսոփայութեան—գրականութեան ունեցող ժողովուրդները առելի ընդունակ

կ'ըլլան անոնց՝ բայց ոչ ամէն ժողովուրդ—վարպետներ արտադրեցին , պատճառը ա՛ն է որ՝ ընդունակութիւն ունէին : Իրաւ է թէ այդ երկու երկիրներն ալ մինչև այսօր երկրագործութեան ունին , սակայն իբր երկրագործական երկիր չեն ներկայացուած , այլ իբր որբան փիլիսոփայութեան՝ գեղարուեստի , գրականութեան : Մենք մեր յօդուածին մէջ երկրագործութեամբ զբաղած չէինք . կընտրէմ անգամ մըն ալ կարդալ և համադրել : Շատ աղէկ գիտենք թէ իմաստասիրութիւն , գեղարուեստ և գրականութիւն յանկարծ չեն ծնիր այլ միշտ évolutionով . բնութեան կարգին մէջ յեղաշրջումը ընդհանուր օրէնք է , չէ՞ , գեղունիդ Վէնիսա : Այո՛ , ժողովուրդներ կան , որոնք անած են կրօնական գաղափարներով , խնդիր չէ թէ անոնք ինչո՞վ կը պարապին . բարեկամ : Ափրիկէի մէջ ինչպէս այլու , շատ մը խաշնարած , երկրագործ ժողովուրդներ կան , բայց մարդկային կեանքի պատմութեան մէջ անոնց չէ տրուած իմացական դեր մը խաղալ : Եւրոպայի մէջ ալ բազմաթիւ ժողովուրդներ կան , բայց չէ՞ք տեսներ թէ ժամանակակից պատմութիւնը գրեթէ քանի մը ժողովուրդներու շուրջը կը դառնայ՝ ինչպէս... դուք իմ յօդուածիս շուրջը և Եւ առանց աղէկ ծափանցելու անոր իմաստին , խառնակութիւն անգամ կուզած էք գտն . այս պատճառով արդեօք անոր շուրջը ծափառած էք . բայց ծափառումը կարող չընեն որ լաւ հասկնաք , հոգ չէ թէ աստուածունիի հանճարով մը ներկայացած ըլլաք :

Ձեր դիտողութիւններուն մէջ շատ աղուոր դատասարգութիւն մըն ալ ըրած էիք՝ յօդուածէս քաղելով . Ա.—Երկրագործներ :—Քաղաքակիրթ երկիրներու երկրագործութիւնը մի՛հասկնաք . իմ ցոյց տուած երկրագործներու պահանջողութիւնները ներկայ ժամանակէս գրեթէ քանի մը հարիւր տարի ետ կ'ապրին տակաւին , թէ իրենց պարտաւած արհեստով [ո՛չ արուեստով] և թէ իրենց գեղարուեստի գաղափարներով , գաղափարներ , որոնք զանազանութիւն մը չեն գներ իրենց և անբանական միջեւ . բայց դուք բնաւ վրանիդ մի առնէք , հասարակ մահկանացու մը չէք , քանի որ աստուածունիի մը անունը առած էք վրանիդ՝ թէև ընտրութիւնը աղէկ չէք ըրած . . . Բ.—Յոյ-

ներ և Խաղաղայիններ : — Այս մասին մէջ Ար-
քդիա գիւտ մը ըրեր է : Ողիմպոսը Խաղաղային
մէջ կը կարծեմ եղեր և չեմ գիտեր եղեր թէ
Խաղաղային միեւնոյն տառն Հռոմայեցի ալ կը
կոչուի . է՛հ , պոս՛վո , ըսելիք չկայ Հաստ-
ուածատեսութեանդ : Գ.—Կրօնական գաղա-
փար եւ ո՛չ թէ զգացում ունեցող ժողովուրդ :
—Մենք մինչեւ հիմա այնպէս կը կարծէինք
թէ՝ մեկնիչները զրուածք մը կը լուսարանեն
և ո՛չ թէ կը մմագնեն և Բայց հոգ չէ՛ , Հաստ-
ուածներու ամօտակից Վէնիսա մը մարդկային
գործերը շատ աղէկ չհասկնար :

Հարաւոր Վէնիսա , ինչո՞ւ կը խեղամ իւ-
րէք յօղուածին ողին : Անգամ մը բաղդատե-
ցէք առ իմ գրած տողս . «Սովայն ճշմարիտ
փիլիսոփաներ Քանդի պէս՝ դուն ուրեք պիտի
սղջունէ»՝ ձերինն հետ «Գերմանիա ուսում-
նատէր երկիր մըն է եղեր , բայց իրը փիլի-
սոփայ միայն Քանդը ունեցեր է» : Այսպէ՞ս
կը հասկնար դուք խօսքը , ո՛վ խմտաունդ :
Ամէն երկիրէ մէկ կամ երկու հոգի յիշած էինք
իրը ճշմարիտ փիլիսոփայ . մեզի համար փի-
լիսոփայ է ա՛ն որ կրցած է դրութիւն մը [ան-
շուշտ փիլիսոփայական] հաստատել : Բա-
սմօրի մասին ըսած էինք միայն թէ Ռասմէօր
ճշմարիտ գիտական մըն էր , բայց անոր
հնարած զիտերը կիրարկող ա՛մէն գիտու-
թեան վաստակաւոր , անոր պէս գիտնական
չէ» : Դուք այս պարբերութիւնը ձեր ուզածին
պէս խեղամ իւրած էք և այսքան պարզ բա-
ցատրութենէ մը սա՛ տեսակ՝ եզրակացութիւն
մը հանած էք . «Բասմէօր փիլիսոփայութիւն
մը հնարած չէ [?] եղեր , այլ միայն գիւտ մը
հնարեր [? ? ?] է եղեր» : Իմ խօսքէս ա՛յս
եզրակացութիւնը կ'ելլէ : Ա՛յսպէս կը հաս-
կնար որ և է զրուածք :

Դաւով մեր մասին գրածիս , բնու պատ-
ճառ մը չունիմ զայն ետ առնելու : Դաւիթ
Անյաղմ խմատասիրական քանի մը գիրքերու
պարզ ծարգմանիչ է . և հաւանականաբար
ա՛նչչափ փիլիսոփայութեամբ զբաղած էր՝
որչափ դուք : Զեզմէ աւելի կը հիմնանք Սա-
հակ Մեարոպի և իրենց կատարած զրական
դերին վրայ . բայց անոնք մեր հասկցած իմա-
տասէրը չեղան և արդէն չէինք սպասեր որ
ըլլային . բայց համարձակ կրնամ ըսել դարձ-
եալ թէ՛ անոնց վրայ պէտք էր որ մեզի չափ
ուրիշ ժողովուրդներ ալ գիտնային հիմնալ :

Եւ ո՞վ ըստ ձեզի թէ Դր. Շարեկացի աղօ-
թագիրք մը չէ գրած . այս պարագան չենք
միտեր և ձեզմէ աղէկ գիտենք թէ՛ Շարեկը
միտն է բոլոր աղօթագիրքերուն մէջ՝ զոր
կրնայ երբեք ունեցած ըլլալ ամբողջ մարդ-
կութիւնը , Բայց դուք իրը խմատասիրու-
թեան հետեւող մը կրցա՞մ էք ըմբռնել թէ
աղօթքը տարբեր է խմատասիրութիւնը տար-
բեր է , և թէ մենք աղօթքի մասին չէինք
գրած : Մինչև այսօր կան մարդիկ , որ
միտն , խրմիտն , անհատկապի գրուածք մը խմա-
տասիրութիւն կոչելու չափ միամիտ են ,
բայց առ իմատասիրութիւն չէ՛ , այլ իմա-
րութիւնը ընդունակ է . բայց մարդկային ընե-
լով արդեօք բոլոր ազգերը և ժողովուրդներն
ալ կը հասկնար . անշուշտ ո՛չ , քանի՛ որ շատ
աղէկ գիտեք թէ Հռոմէոմիները և Գերմանա-
ցիները նոյն չեն ամէն տեսակէտով : Ու մենք
եզրակացուցեր էինք թէ՛ մեր հասարակութեան
խնայականութիւնը բարեփոխելու պէտք
ունի , որ կրնայ աղի ունենալ միայն յարատե-
ւաւորմատասիրութեամբ՝ որ ժողովական կը
դառնայ , Ի՛նչ , ժողովականութեան օրին-
քին անեղիկ ըլլալուն կը կասկածի՞ք . չեմ
գիտեր թէ Հաստուածներու մէջ գոյութիւն ունի՞
ան . բայց վստահ եմ որ մարդկային կեանքին
մէջ գոյութիւն ունի և պիտի ունենայ : Դուք
ալ պիտի արդիք , համոզուիք , երբ ուսում-
նասիրք ու լուսարանութիւն , Լուսարանութեւ
պէտք ունիք դուք , ո՛վ մեծղ Վէնիսա : Շատ
մի՛ տեսնէք ձեզի դէմ խօսելու յանդգնութիւնը .
դուք աստուածային , մենք մարդկային , այո՛ ,
բայց չէ՞ որ դիցարանութեան — և աւա՛ղ ձեր
յօղուածին ալ — մէջ մարդկային կիրքերով
ներկայացած էք և ան ալ . . . :

ԿՈՐԻՆՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վաղը տեղի կ'ունենայ , Ինժին Զրանէ-
զի որահին մէջ Պոլիսի Սէպըը Միզգիւքովի
կազմակերպած չորս նուագահանդէսներու
շարքին առաջինը , որ կը խոստանայ փայլուն
յաշողութիւն մը ունենալ Բաժանորդագրու-
թենէն զատ , զոր ծանուցած էինք նախորդ
թիւով , զիւրութեան համար մուտքի զին որոշ-
ուած է 20 զր՝ : Դպրոցականներու համար 5
զր՝ :

ԿԵՕՔԷ ԵՒ ՀԻԿՕ

Բ.

Այս կարգի անսանելի բաղադրություններու ղեմ տկալու միակ միջոցը կը գտնուի Հիւկօ իր սա բացատրութիւնով. — «Եւ միշտ կատարեալ հիացում մը ունեցած եմ այդ հեռանաւոր բանաստեղծին՝ Կէօքէին, այդ խոր մտածողին, այդ անմարմար խաղաղութեան»:

Վ.Օլբր Հիւկօյի մասին կ'ըսէ. — «Թէեւ այս երկու մեծ փիլիսոփայները կը պահպանին բաւական տարբեր միջավայրերու, Կէօքէ ինքնին ամենէն աւելի բարձր մարդը կ'երեւայ. որով Գերմանական մտածումը օժտած ըլլալ Լուստրէն ի վեր: Հիւկօյի միայն կը մնայ յարգանք մը մասնացանկ, նախ հազաւաւորէն բայց յետոյ յանկարծաւաւորէն, միշտ անդրադարձնուած մեծ ալպայեանին հասցեին: Թերեւս ինք դեռ զայն կ'երազէ այն սուկալիթիսար կիսանդրին մէջ՝ զոր Տալիս Տ'անմէր կերտած է, երբ ինք այդ անձն Les Rayons et les Ombres-ին մէջ կը գրէր.

Այն մոզը, որուն միջոցը յաւանդները կը զոյացնէ,

Խախտան ֆոլերը մեկիկ մեկիկ մերկացած ե. . . :

Բայց նոյն գիրքին նախաբանը կը յայտնէրէ՛ք եղբիւնակք. շանխած չէ հիստիային մեծ բանաստեղծութիւնը՝ որ ներկայացուած է նմանապէս Ֆրանսայի մէջ հիւսն ալի բանաստեղծներու կողմէ: Այդ Հիւսնայի բանաստեղծութիւնը բուն ազդեցութիւն մը ունեցած է հարաւի բանաստեղծութեան վրայ»: Հիւկօ վեր կը հանէ կարգ մը անձեր՝ որոնք ալ անցեալին կը վերաբերէին: Ու Հոման Ակադեմի բնորոշումը ասեմ հառի մը մէջ կ'ըսէ. «Մեծն Կէօքէի մասին ի վեր՝ Գերմանական միջոցը նոր ստեղծ չէ ունեցած: Պայրքնի եւ Մօթի մասին ի վեր, անգլիական բանաստեղծութիւնը մաւրած է. այս պահուստ ինքզինքին մէջ մի միայն մէկ գրականութիւն մը կ'ալ մտուած ու կենդանի. Ֆրանսական գրականութիւնն է ան»:

Իր հետաւոր Վալմարէն, — զոր կարգ մը նախորդներ իրենց եռանդուն քրոակ-ցութիւններով Ֆրանսայի կը մօտեցնէին, — Կէօքէ հետեւեցնութիւնով կը հետեւէր, մասնաւորապէս իւր Կոյսի մէջ մտախուժ

Ֆրանսական նոր գրականութեան շարժումին: Անկէկա Վալմարսկայի Տալիսի ախտ չունէր՝ Վիլթոն Հիւկօյի արտադրութիւնովը շանագրգռուելու համար: Կէօքէ՝ կը գրէ Էմիլեման, 1827 Յունվար 4 Էն ի վեր, Հիւկօյի բանաստեղծութիւնները շատ զովեց. «Ան-վիսելի տաղանդ մըն է, որուն վրայ Գերմանական գրականութիւնը կերպով մը ազդած է: Եւ զայն կամովին Մանթանի հետ ալիսի բաղ-դասէի: Անկէկա շատ անարկայական է եւ ինքնին անսանկ կը ըսէր թէ Լամարքինի ու Տըլալիսիին շատ նշանաւոր է: Շարքայ-րիանին է որ կը մնանի ան, եւ Շարքայ-րիան անաչին կարգի հետեւաբանաստեղ-ծական տաղանդ մըն է: Բայց եթէ կ'ազդէ գիտնալ Հիւկօյի գրեւորները, կարգաւոր-անոր Շարքայեանի վրայ գրած բանաստեղծու-թիւնը. Les Deux Iles»: Կէօքէ՛ գիրքը ստիչեւս դրաւ ու ինք գնաց՝ վառարանին կրքին: Սկսալ կարգալ՝ «Գեղեցիկ պատկերներ չունի՞ր, բարձր Կէօքէ»: Ինքնին մօտեցաւ ան. «Տեւէ՛ք սա անցիւր, ի՛նչ գեղեցիկ քիւն»: Կարգաց այն ռասմաւորը ուր մերկայից ան-պին պատկերացումը կայ, ուրիշ փառալկը կը ծայրքի, որ վաւերն վեր գիրքին ներսը կը շարժուարէ: Եւ՛նչ գեղեցիկ է, որով-նեսեւ պատկերը իրական է, մենք զայն լեւ-նեւուն մէջ կ'անցնէ տեսնել. հոն մարդ իր գլխուն վերեւ մերկիկներ կը տեսնէ եւ փայ-լակներ՝ վաւերն վեր զարնող»: Քաղեց

[Յաջորդով]

ԼԵՒՈՆ ԷՍՏՄԱՆԵԱՆ

Ստացանէ ծանօթ գրուցէ եւ մեր աշխա-տակիցը Զիւլթ-Սարափի նոր գիրքը՝ Միա-միսի մը Արկածները, ինքնասխալ ու գեղեցիկ պատգամութիւնով սիրուն հասար մը, յոյս տեսած Տէր-Ներսէսեան Տպարանէն: Միաւրիսի մը Արկածները՝ Զիւլթ-Սարափի գեղեցիկագոյն արտադրութիւններէն պատմութիւններու շարք մըն է, որուն ըն-թերցումը ծանոթանալին մեծ ճամբարանք արթնցումն է: Նկարագրողի եւ պատմողի կրկնակ յաջողութիւններով կը ներկայանայ հոն Զիւլթ-Սարափ, հարստ վրձին մը շարժելով իր արկածախնդրական շանկեան նիւթերուն մէջ: Իր այս սիրուն հասարը պնդումն է գեղարուեստական կողմով մը: Էջ 280: Կը գտնուի ամեն գրականաւորի հոն, ինչպէս նաեւ Տէր-Ներսէսեան քրթա-վանաւանդը: Կեդրոնաւոր՝ Սթանբուլ, Շիրին խան, քիւ 7, Օճնիկ եւ ընկ.:

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

ՀԱՆԴԷՊ “ՄԱՍԻՍ”Ի

«Մասիս»ի Բ. Տարեցոյանը քիւսիսիւնը աւելիով՝ մեր պաշտօնականացման Մանգուլիի ու Աւեստերի նուիրած հետեւեալ գնահատական տողերը կ'ողջունենք հաճոյքի ու շնորհակալութեամբ զգացումներով . —

Դրեթէ տարի մը եղաւ որ Մասիս կը հրատարակուի իբր գրական շարժումներով, ինչով Արմէնի խմբագրութեամբ, և ոչ թէ միայն յոգնութեամբ նշան չցուցներ, այլ ամէն թիւ ուժով եւ առողջ կեանքի մը երեսնամեայ իր պարզէն Սա իրողութիւն է թէ ինչով Արմէն յարատեւութեամբ կը շարունակէ Մասիսը հրատարակել՝ շանտով զայն օժտել նորանոր և իսկապէս հանգամանքներով և զայն շահեկան և հրապուրիչ ընելու համար ջանք չխնայելու Պէտք է ըսել թէ ինչով Արմէն իր գեղեցիկ կտրուրութեանց կը միայնէ կտրով մը, ինչ որ անհրաժեշտ է մեր գրական թերթերուն վարչականութեան, և չենք կրնար ուրանալ թէ՛ Մասիսի այս գրեթէ մէկ տարւածան հուսարածուն մեր գրականութեան մէջ արժանաւոր տեղ մը շինած է իրեն համար:

Աւեստեր

Մասիս Դրական Շարժումներով մասնօրէն հրատարակաւ ինչով Արմէնի խմբագրականութեամբ յաջողապէս աւարտեց իր անդրանիկ տարեշրջանը և անցած շարժում հրատարակեց Բ. Տարեշրջանի Ա. Թիւը Մեր պաշտօնականիցը փոխանակ խօս վազքով մը ստեղծով կէս ճամբան կանգ առնելու, լրջութեամբ ձեռնարկուած ամէն գրական գործի նման, ծանր ծանր ու ատիճանաբար զարգացուց իր թերթը, որ այսօր կարեւոր տեղ մը կը զբաղէ գրականութեան մէջ: Մասիս իր առաջիկայ շրջանին համար ապահոված է աշխատակցութիւնը ծանօթ գրողներու և աւելի խնամով պիտի արշաւանակէ իր գրական ձեռնարկը: Հանրութիւնն ալ փոխադարձաբար պիտի փութայ անշուշտ քաջակրեկ այս գրական թերթը, որուն պէտքը աշխարհի զգալի է ներառաշխարհի համար: Կը շնորհաւորենք մեր պաշտօնականիցը և յաջողութիւն կը մտաւորենք:

Մանգուլի

ԱՆԵՔՍԱՆԵԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Պոլիսի երաժշտաւոր հասարակութեան խիստ ընտիր բազմութիւն մը, կազմուած Հայ և օտար ծանօթ ընտանիքներէ և բարձրաստիճան անձնակցութիւններէ, նախորդ հինգշաբթի ունկնդրելու վայելքը ունեցաւ տաղանդաւոր երիտասարդ Հայ Թուրքա-կանարը՝ Տիրան Պէյ Ալեքսանեան, իր նուագահանդէսին մէջ մասնակցութիւնովը Տիկին Կրօնէիի և Փայլուն յաջողութիւն մը և գեղարուեստական ճշմարիտ յաղթանակ մը եղաւ այս երեկոյթը, նոր առիթ մը դառնալով երեսնամեայ հրապուրիչ տաղանդը և նուրբ արուեստը երիտասարդ արուեստագէտին, որ ողջունուեցաւ շնորհաւորական խանդավառ ու սրտազին ցոյցերով, իր նուագածութեանը միջոցին, ինչպէս նուագահանդէսին աւարտութեան ետքը: Ալեքսանեան իրապէս տէրն է արուեստին և ունի արտայայտութեան ու interpretationի հզօր կարողութիւնը, որով կը կենդանացնէ ոգին իր զարկած կտորներուն, և Թարգմանելով անոնց բոլոր զգայութիւնը և զայն հաղորդելով ունկնդիրին: Իր հզօր ունի գաղտնիքը համակ զգացում դառնալու ձեռքին մէջ, ընկերացած բարձր կատարելութեամբ արուեստի մը և styleի, որոնք իրաւունքով կը վաւերացնեն վարպետի համբաւը: Հայ երիտասարդ արուեստագէտին վրայ է իր այդ արուեստով է որ ունկնդիրները հմայեց, Պէթովէնէն, Հայտնէն, Ռեյնալդին կտորներով, ուր դրաւ իր ամբողջ տաղանդը և զարնուածքի հրապուրչը: Գեղեցիկ ընկերակցութիւն մը կը կազմէր իրեն հետ՝ դաշնակով՝ Տիկին Կրօնէի:

Յաջորդ Թիւով

ԾՕԲԷՆՀԱՌԻԷՐ

Մամբրեանի նախորդ շաբթուան յօդուածին մէջ.

էջ	տող	կարդալ	կարդալ
10	4	կ'օգտարբեն	կ'օգտարբեն
»	19	նուագ շատ	շատ
»	20	այնքան	այնքան քիչ
13	1	սպասումի	սպասումի
»	3 7	կը սպասեն	կը սպասեն

Հիմնադիր Կ. Ս. Իսիփի-ձէՍԱՆ: Արտօճագէր ՏՕԲԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՃԻՀԱՆ

Արշարայրի Պոլիսի գործակալն է «Օսմանը» Դրատունին Տէր Տիար
Յովհաննէս Աղնուոր, Պապը-Ալի Ճատաէսի, թիւ 56 :

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներն և հրատարակիչներն անոնք՝ որ կը բազման Մասիսի
մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, նշեալ է մասնան մեր
պայմանը թէ, Չ օրինակ զրկուած գիրքերը միայն նկատուութեան
կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական և խղիւղական .—Բա-
ժանորդագրութիւն կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
զրշ. : գաւառներու համար՝ տարեկան 108 զրշ. : վեցամսեայ 60 զրշ. :
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. : վեցամսեայ 20
ֆր. : Զեւրէ վաճառու՝ չաւր փարս : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարգմանութիւններով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական այն մասնակի-
նէջ, արժանացած՝ քննիչներու գնահատմանը : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր քննիչներու
բան կը ներկայայնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ ան-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անասնական-անդամաւորական, եր-
կրագործական, իրաւարանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ
ամէն զրուիւթիւն և բաժանորդագիրն ուղղել Տէր և Տնօրէն Գաղնգին
էֆ. Պոյաճեանի հասցէին, Դալամիտ, Մահմետիէ Ճատաէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Jeprends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART de VERDUN-s-Meuse
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires ; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans les Pharmacies.
* SUPERIEURE a L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. *

Նշանաւոր Տօքթ. Բէքաօի
այս Էմուլսիօնը կը զերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմաննե-
րը : Զուկի խզի տեղ կը դո-
ժածուի և անկէ աւելի
օգուտ ունի տղոց և ակար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ռ. Սօլախեանց, կ. Պոլիս

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵՍՄԻ կը դարձանէ ամէն տե-
սակ ակումայի և լինտի հիւանդութիւնները, փառած ակումները կը լեցնէ՝
առողջ ակումներու պէս երկար առնել գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նորը, ճաշակատար և շիմացիւն
արուեստական ակումներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Դարու, թիւ 8 : Կարօտ հիւանդները ձի կը դարմանէ հի գ-
շարթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

Ս Ր Շ Ա Լ Ո Յ Ս

Իգմիրեանն նոր օրաթերթը , կը հրատարակուի ամէն օր , արշա-
լոյսին : Իր պէսպիսուն բովանդակութիւնով , իգմիրեան քրտնիկներով
ու թարմ լուրերով՝ Արշալոյս հաճելի զանազանութիւն մըն է մեր տե-
ղական օրաթերթերու շարքին մէջ : Բաժանորդագիրն է Իգմիրի համար
տարեկան 80 դրշ . Պոլսի և դառններու 108 . արատահման 18 ֆր :
Տէր և Տնօրէնն է Բարսեղ Էֆ . Քէշիշեան : Հասցէ՝ Պէտլի ք-Վեղիւր խան,
Իգմիր :

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Յ Ի Ի Ն Մ Ը

Հ Ի Ն Օ Ր Ե Ր

ՊուէՏ Խաչատուր Միսաքեան

Եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացքներ

ԴՐՍՏ Թ. Գ. ՄԱՐԶԵՐԱՆ

ԺԹ.ԲԳ Դարու Թրքահայերու իմացական , բարոյական և արուեստա-
կան վիճակին վրայ վաւերական յիշատակագիրներով զարդարուած հա-
տոր մըն է՝ 140ի չափ էջերով , որ կը խօսի Պուէա Սաչատուր Միսաք-
եանի և իր ժամանակակից մասաւորականներուն վրայ : Կը ծախուի Կ.
Պոլսի բոլոր գրաւաճառներուն քով , գին 7½ դրուշ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ . — Ընթացք Թուարանութեան , Տարր
Ա. եւ Բ. տարի.—Յօդակց՝ Զ. Թարսեան . — Այս գաւազիրքը կը պա-
րունակէ՝ բուսական , ջուր գործողութիւն , հասարակ և տարւո-
րական կոստում , երկրաչափական գիտութիւն և պարզ ծանօթու-
թիւններ , 54 շահեկան պատկերներ ու ձևեր : Ամէն հաշիւ ու խնդիր
օտանկեան չափերու և դրամներու վրայ հիմնուած է : Գործին սկիզբը
շիտիկն բացատրուած է ուսուցումի հղանակը , որով ամեն ձեռնդներ ալ
կրնան զիւրու սորվեցնել իրենց գաւիին : Տնօրէններ գրատուներ զի-
մեւով օրինակ մը ձրի կ'առնեն . գրատու գրաւաճառներ և տնօրէն-
ներ 50 փարայի փոսթի փուլ պէտք է զրկեն իրր ծախք : Գինն է 4½
դրուշ եւ զիւր 30 օ/ո :

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ . — Վերաբույժ-Առամաբույժ Սահակ Էֆ . Գան-
ճեան կը ծանուցանէ իր բազմաթիւ յաճախորդներուն թէ՛ իր Բերաթ
աշխատանոցը փոխադրած է Մեծ-Փողոց , Սանթա-Մարիա եկեղեցիին
դիմացի թիւ 414 արարքընանը , որ կ'ընդունի իր յաճախորդները ամէն
օր կէս օրէ ետքը , իսկ Դատը-Քէշի իր բնակարանը առաջուան պէս
մինչեւ կէսօր միայն :

Մ Ս Ն Չ Ո Ւ Մ Է Միակ առտուան Հայտթերթը, կը հրատարակուի ար-
շապէս, չալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը դանուի Պոլի-
սի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետաքիրներ, քա-
ղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տն-
տեսական և ընկերային յօդուածներ: Զորեքշաբթի եւ չարաթ օրերը կը
հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւ-
տրական և գրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բա-
ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դր., գաւառ՝ 108, արտասահման՝ 25
ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն
գրութիւն ուղղել Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Ֆ. Էֆ. Գոյսէրեանի
հասցէին՝ 38, Պապը Ալի Ճառագոյն:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայահեաց Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ
դաստիարակութիւն մը՝ դարգացած և բարեկիրթ տանտէրիներ և դաս-
տիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժա-
րանին տեսչութիւնը յաշակերտութիւններու ֆիզիքական, իմացական և
բարոյական զարգացումը միշտ խղճամբա հոգածութեան առարկայ
կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուց-
չական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները,
ինչպէս նաեւ ընտանի, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտու-
թիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և
ձեռագործի գտները: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի,
որուն կէսը պէտք է հասուցանել տարեչափանին սկիզբը և կէսը Ծնունդ,
Գի արձակուրդին: Դասնակի և երգեստնի համար կը պահանջուի 5, 3
և 2½ օսմ. ոսկի, դասաւարտութեան թիւին համեմատ: Վարժարանին
յառաջիկայ տարեչափանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դ. իրիկունը:
Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագիրը կար
գիւնել Մր. Բիթի, Պապըը Հատ. 4, Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ.
Դաւիթեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատաբազար:

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.— Հրատարակելու Քատիմի այս աշխատութի-
ւութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և ընկերական հարցերու
վրայ շահեկան և հետաքրքրաշարժ տեսութիւններ, ժողովրդական
ոճով: Քատիմի գրեթէ արդէն ծանօթ ըլլալով հանրութեան,
վտանգօրէն անոր այս գործն ալ պիտի արժանանայ այն սիրալիր ըն-
դունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին գրիչի ար-
տագրութիւնները: Գինը, խիստ աժան գրուած է, որպէս զի ժողո-
վուրդին ամէն դասակարգին մատչելի ըլլայ: 3½ դր., 200 էջ ունե-
ցող այս գիրքին համար: Կը ծախուի բոլոր գրաւաճառներուն քով:

“ՄԱՍԻՍ», Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 դրշ :

Արտատպմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին սպանալու մեր պարգևները ,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Դրամ կարելի է զրկել փոխանակադրով , օտմանեան կամ
օտար ղանձա-փօսքով և օտմ. թղթատարական նամակադրոշ-
մով , 20 հաւը մէկ մէճիաի հաշիւով :

Զրատարակուած ձեռագիրները ետ չեն գարձուիր :
Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել տա :

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ», Ի Հասցեով

Պապը Ա. Լի ճասէսի , Թիւ 38

درعاليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը հե-
սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականա-
կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ ասնդելու համար : Վար-
ժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնա-
մարզներուն և խաղերուն , ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր
առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և զեղեցիկ
չէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի
ամէն տեսակ զործիքներ, վերջին զրութեանց համաձայն :

“ՄՍՍԻՍ»ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն , որ 550
էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոյ մը կը կազմէ ,
կրնայ ստացուիլ Խմբագրութենէն , կանխիկ փոխա-
րժեքով՝ 30 դր. . կազմուած 35 : Թղթատարով ղրկուելիք
Հասոյներու համար պէժ է 5 դր. աւելի վնասել :